քար, թուարանական հաշուով կլինի երեք հազար 400 լիտր ծանրութեամբ, այս քարը բերել է մի և կէս վերստ հեռաւորութիւնից՝ այն է Նորքայ ձորիցը, որ և բաղմաց ծանօթ քար է։

Այս հեղեղը այս անգամ ժողովրդականաց ՇԵասիցը յաղեցաւ, այժմ էլ սկսել է դատարաններին ՇԵասել. . . . . 1, առաջ լցրեց Նահանգապետի ներքին տները և պարտեզը, քիչ էլ կանցելեարը (ակցիզնի), և պրոքուրորի տունը՝ թէև անՇԵաս. 2, Նահանգապետի կանցելեարը այնպէս՝ որ թէ սեղան և թէ նստարաններ ջրի երեսին էին բռնում. 3, Գաւառական դատարանը. 4, Օկրուժնի տուղը, և Նահանգական մեծ դատարանը լցվեցին սրանք, որը շատ և որը քիչ, միայն համարեա թէ բոլոր ուժը էս անգամ թափեց սրանց վերայ. այս անգամ գանձատան էս քիչ էր ՇԵացել ՇԵասելու,,։

Երևանայ մերազնեայք քանիցս այսպիսի ՇԵասուց ենթարկուած լինելով, և նկատելով ի ներկայս նոցա՝ այս ինքն միջին և ստորին կարգի ժողովրդականաց ունեցած անձուկ նիւթական վիճակը և միջոցները, Վ. Հ. Հայրապետ պատուիրեց Սինոդին չքաւորաց օգնելոյ համար մի քանի Վիճակներէն կամաւոր նուէրներ հաւաքել։

ԿԱՐԱՊԵՏ Զ. ԳԱԼՍՏԵԱՆՑԻ ԿՏԱԿ

Լոքաքրոնիան Արարատ Մամաքրոյ.

Աստրախանցի Հայազգի և այժմ՝ Հանգուցեալ Կարապետ Զաքարեան Գալստեանց աւանդեալ էր կտակագրով ի 20 Ապրիլի 1875 ամի՝ ի միջի այլոց՝ նաև յօգուտ Օրիորդական Դպրոցի Հայոց քաղաքիս զ500 ռուբլի արծաթի, այնու՝ զի մայր գումարն ՇԵասցէ ի Դրամատան ի շահաբերութեան, իսկ տոկոսեաք այնորիկ պահպանեսցի ի Դպրոցի մի հայազն չքաւոր օրիորդ ի յիշատակ իւր՝ կըրելով զանունս Ուրբէբոհի Գալստեանց։ Զկնի կնքելոյ Պ Գալստեանցի զերկրաւոր կեանս իւր, կտակակատար հանգուցելոյն Աստրախանցի Հայազն վաճառական Պ. Մինաս Գէորգեան Մատաթեանց ընդ գրութեան իւրում ի 14-ն ներկայ ամսոյ առաջի արար Հոգաբարձութեան Դըպրոցաց զէորս հատ թագաւորական հինգ տոկոսաբեր բանկային բիլիոն առ գումար հինգ հարիւր ռուբլի՝ և խնդրեաց տնօրինել համաձայն կամաց հանգուցեալ կտակարարի։

Հոգաբարձութիւնս ընտրեալ զմի յընդունակ չքաւոր աշակերտուհեաց Օրիորդական Դպրոցի՝ անուանեաց զնա որդեգրուհի հանգուցելոյ Գալստեանց ըստ բառական մտաց կտակագրին և կարգաւորեաց ի տոկոսեաց 500 ռուբլի գումարի հոգալ զուսումնական պիտոյս, զգենլիս և զգանելիս յիշեալ որդեգրուհւոյ Գալստեանց ցաւարտ ուսմանցն աւանդելոց յՕրիորդական Դպրոցի, և զտացմանէ բիլիոնաց համանգամայն և զկարգաւորութենէ իւրմէ ծանոյց ի տեղեկութիւն կտակակատարի հանգուցելոյն՝ Պ. Մինասայ Մատաթեանց՝ յայտնելով նմա զգոհունակութիւն։

Ուստի Հոգաբարձութիւնս Դպրոցաց զազգօգուտ կտակաւանդութենէ հանգուցելոյն Գալստեանց ծանուցանելով Խմբագրութեանդ Արարատայ՝ խնամարհարար խնդրէ հրատարակել զայսմանէ յէջս ամսագրոյդ յընդհանուր տեղեկութիւն բարենախանձ անդամոց Հայազն ժողովրդոց։

Հոգաբարձուք Յովսէփ Ա.Ա. Քահանայ Բունիաթեանց
Գրիգոր Սողոմոնեանց
Սիմէոն Պօպովեանց։

ի 15 ն Մայիսի 1876 -դ
ՅԱՌԳԵԼԵԱՆ։

Յիշատակն բարեգործաց օրհնութեամբ եղիցի։